

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սովետական ժողովուրդը ստեղծագործական հսկայական վերելքով ու խանդավառությամբ տոնում է Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման պանծալի 60-ամյակը: Սովետական Հայաստանը ՍՍՀՄ-ի կազմում անցավ տնտեսական, սոցիալ-քաղաքական և հոգևոր զարգացման փառապանծ ուղի: Այդ տարիները հայ ժողովրդի ազգային վերածննդի ժամանակաշրջան էին: Ազատարար Հոկտեմբերը փշրեց սոցիալական և ազգային ճնշման շղթաները՝ լայն ճանապարհ բացելով ժողովրդի ստեղծարար ուժերի ծաղկման համար:

Հայ ժողովրդի պատմական անցյալում մենք ունեինք բժշկության, բուսաբանության և այլ գիտությունների փայլուն ներկայացուցիչներ, ինչպիսիք էին Ամիրզուլլաթը, Հերացին, Շարիմանյանը և այլք: Ա. Տեր-Պողոսյանի «Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում» հայտնի մենագրության մեջ ամփոփված է այդ բնագավառի հազարամյա սլատմությունը:

Հայտնի է, որ սովետական կարգերի հաստատումից առաջ Հայաստանում չկար կենսաբանական գիտահետազոտական որևէ հաստատություն և կենսաբանական գիտությունների զարգացմանը փաստորեն հիմք դրվեց միայն սովետական կարգերի հաստատումից հետո: Կոմունիստական կուսակցությունը և սովետական իշխանությունը, հիմնվելով լենինյան իմաստուն քաղաքականության վրա, տնտեսական ծանր պայմաններում անհրաժեշտ բոլոր միջոցները գործադրեցին գիտության՝ այդ թվում և կենսաբանության դանադան ճյուղերի զարգացման համար:

Անհրաժեշտ է ընդգծել այն հսկայական դերը, որ Հայաստանի գիտության զարգացման համար խաղացել և շարունակում են խաղալ ռուս գիտնականները և մեր երկրի առաջատար գիտական կենտրոնները, հատկապես կադրերի պատրաստման և կատարելագործման ասպարեզում: Գիտության՝ այդ թվում կենսաբանության տարբեր բնագավառների զարգացման համար մեծ ծառայություններ մատուցեցին հայ խոշոր գիտնականները և մասնագետները, որոնք հրավիրվեցին Հայաստան տարբեր հանրապետություններից և երկրներից, կամ վերադարձան հայրենիք սեփական ցանկությամբ: Դրանց թվին են պատկանում Լևոն Հովհաննիսյանը, Համբարձում Քեչեկը, Վարդան Արծրունին, Աբգար Իսահակյանը և բժշկական ասպարեզի այլ գործիչներ: Հանրահայտ են Ավետիս Քալանթարի, Պապա Քալանթարյանի, Գ. Գրծեկյանի, Ա. Հովհաննիսյանի, Հ. Բեդեկյանի, Ա. Տեր-Պողոսյանի և շատ ուրիշների մեծ ծառայությունները Հայաստանում կենսաբանական գիտության տարբեր ճյուղերի հիմնադրման ու զարգացման գործում:

Հոգվածի սահմանափակ ծավալը թույլ չի տալիս լիարժեք լուսաբանել կենսաբանության հաջողությունները Հայաստանում, հատկապես բժշկական գիտությունների բնագավառում:

Սովետական իշխանության հաստատումից մեկ ամիս անց հրամանագրվեց նրանի ժողովրդական համալսարանի ստեղծումը՝ հումանիտար և բնագիտական ֆակուլտետներով:

* Տե՛ս «Գիտությունը Հայաստանում 50 տարում» ՀՍՀՄ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1973:

Գյուղատնտեսական գիտությունների զարգացման բնագավառում կարևորագույն իրադարձություն հանդիսացավ 1922 թվականին Երևանի պետհամալսարանում գյուղատնտեսական ֆակուլտետի ստեղծումը, որը 1930 թվականին վերածվեց հայկական գյուղատնտեսական ինստիտուտի: 1928 թվականին Երևանում կազմակերպվեց Անդրկովկասյան անասնաբուժական ինստիտուտը: 1926—34 թթ. Հայաստանի կառավարության որոշմամբ կազմակերպվեցին մի շարք գիտահետազոտական կայաններ, որոնց հիման վրա հետագայում ստեղծվեցին առանձին գիտահետազոտական ինստիտուտներ:

Մեծ հաջողությունների են հասել Հայաստանի սելեկցիոներները և գենետիկները: Հայտնի է այն մեծ դերը, որ խաղաց ակադեմիկոս Մ. Թումանյանը Հայաստանում բուսաբուծության զարգացման գործում: Նա հայտնաբերեց ցորենի արժեքավոր սորտեր և վայրի տեսակներ, որոնք մեծ նշանակություն ունեն այդ բույսի նոր հեռանկարային սորտեր ստանալու համար: Հետագայում այդ բնագավառին էին նվիրված Վ. Գուլբանյանի, Գ. Բաբաջանյանի, Հ. Բատիկյանի և նրանց աշխատակիցների հետազոտությունները:

Մեր հանրապետությունում ստացվել են ցորենի և գարու հեռանկարային սորտեր: Ստացվել են նաև լոբու, ոլոռի, ծխախոտի, կարաոֆիլի, խորդենու, նոր սորտեր, որոնք շրջանացված են և կիրառվում են բազմաթիվ տնտեսություններում: Հարկ է նշել, որ հանրապետությունում օգտագործվող բանջարաբուստանային կուլտուրաների սորտերի ճնշող մեծամասնությունը ստացվել է հայկական սելեկցիոներների ջանքերով: Սոցիալիստական աշխատանքի հերոս Ա. Անանյանի ղեկավարությամբ ստացվել են տոմատի, պղպեղի, բադրիջանի, սեխի 20-ից ավելի բարձր բերքատու նոր սորտեր: Հայաստանի առաջին բանջարաբուծ-սելեկցիոներ պրոֆեսոր Ս. Խաչատրյանի կողմից ստացվել են բանջարաբուստանային կուլտուրաների նոր սորտեր՝ այդ թվում սեխի և ձմերուկի: Ստացված խորդենու «Ախստ—4» սորտը գերադանցում է այլ սորտերի՝ եթերայուղի պարունակությամբ և բերքատվությամբ:

Խաղողագործության բնագավառում առաջին հերթին անհրաժեշտ է նշել «Հայկական ՍՍՀ-ի ամպելոգրաֆիա» ֆունդամենտալ աշխատության ստեղծումը: Խաղողի տարբեր սորտերի ուսումնասիրությունները հիմք հանդիսացան զինգործության համար առանձին սորտերի սելեկցիոն հետազոտությունների, ինչպես նաև վաղահաս և ցրտադիմացկուն սորտերի ստացման համար: ՍՍՀՄ գյուղատնտեսական ակադեմիայի թղթակից անդամ Ս. Պողոսյանի ղեկավարությամբ ստեղծված են խաղողի տասնյակ նոր սորտեր, այդ թվում մի շարք հեռանկարայիններ, ինչպիսիք են «Հանդիսի», «Տոկուն», «Կարմրահյուսի» և այլն:

Խոշոր տնտեսական նշանակություն ունեն պրոֆեսոր Ա. Այվազյանի ղեկավարությամբ ստացված խաղողի նոր սորտերը և նրա կողմից մշակված նոր մեթոդները սելեկցիոն աշխատանքների և բույսերի զարգացման արագացման համար:

Հանրապետության սելեկցիոներների ջանքերով ստացված են պտղատու բույսերի ավելի քան 40 նոր սորտեր, որոնք օժտված են մի շարք արժանիքներով և ունեն արտադրական մեծ նշանակություն (դեղձի «Արմինե» սորտը, ծիրանի «Արեգ» և «Մասիս», սերկևիլի «Անի», խնձորի, տանձի և այլ պտուղների սորտեր):

Նշանակալի հաջողությունների հասան հանրապետության գիտնականները գյուղատնտեսական անասունների նոր ցեղերի ստացման բնագավառում: Դրանց թվին է պատկանում խոշոր եղջերավոր անասունների «Կովկասյան

զորը» ցեղի ստեղծումը, որը ներկայումս կազմում է հանրապետության տըն-տեսությունների անասունների գլխաքանակի շուրջ 90 տոկոսը և լայն տարածում է գտել նաև հարևան հանրապետություններում (Ա. Թամամշև, Ն. Ստեփանյան, Շ. Ժամկոչյան)։

Համամիութենական գյուղատնտեսական ակադեմիայի ակադեմիկոս Ա. Ռուխկյանի ղեկավարությամբ ստեղծվեց ոչխարների «Արագածյան» ցեղային խումբը և մշակվեցին տեղային կոպտաբուրդ ոչխարների նպատակային ձևափոխման գիտական հիմունքները նրբագեղմ և կիսանրբագեղմ ձևերի։

Թռչնաբուծության բնագավառում առաջին հերթին անհրաժեշտ է նշել հավերի «Երևանյան» ցեղի ստեղծումը, որն իրականացվեց ակադեմիկոս Ս. Կարապետյանի ղեկավարությամբ։

Հիշատակման է արժանի Բ. Բազրատյանի կողմից ստացված «Սովետական մարդեր» ճագարների նոր ցեղը, որը ներկայումս լայն տարածում ունի հանրապետության տնտեսություններում։

Կարևոր արդյունքներ ստացվեցին թթենու շերամորդի գենետիկայի ուսումնասիրության ուղղությամբ՝ պրոֆեսոր Ս. Սարգսյանի ղեկավարությամբ։ Պլեյոտորոպիայի երևույթի բազմակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն տվեց ստեղծել արդյունավետության տեսակետից ունիկալ պարթենոկլոններ և այդ արժեքավոր միջատի նոր արտադրական ձևեր։ Նշված աշխատանքների բնական շարունակությունը հանդիսացան վնասատու միջատների դեմ պայքարի գենետիկական մեթոդների մշակումը և կիրառումը ԳԱ կենդանաբանության ինստիտուտում։

Հանրապետության գիտնականները մշակել և արտադրության մեջ են ներդրել ագրոտեխնիկական և անասնաբուժական մի շարք կոմպլեքս միջոցառումներ, որոնք նպատակամղված են գյուղատնտեսության արտադրության կուլտուրայի ավելացմանը, հողերի բերրիության բարձրացմանը, էրոզիայից նրանց պաշտպանմանը։ Գյուղատնտեսության արտադրության կուլտուրայի և բույսերի բերքատվության բարձրացման համար մեծ նշանակություն ունեցան հանրապետության գիտնականների կողմից մշակված և գիտականորեն հիմնավորված ցանքաշրջանառությունների կիրառումը, վաղահաս կարտոֆիլի մշակման և զանազան շրջաններում տարբեր գյուղատնտեսական կուլտուրաների բարձր բերքի ստացման տեխնոլոգիան, հացահատիկային կուլտուրաների էլիտային սերմերի արտադրության և բազմաթիվ այլ գիտաարտադրական հարցերի հաջող լուծումը։ Մշակված և լայնորեն կիրառվում են կերերի կոնսերվացման, գյուղատնտեսական արտադրության թափոնների վերամշակման տեխնոլոգիաները, ստեղծված են գյուղատնտեսական կենդանիների էֆեկտիվ կերաբաժիններ և այլն։

Հանրապետության մասնագետները մշակել և արտադրության մեջ ներդրել են մի շարք միջոցառումներ՝ գյուղատնտեսական կուլտուրաների և կենդանիների վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարելու համար։

Մոլախոտերի դեմ պայքարի միջոցների օգտագործումն ամփոփվեց ակադեմիկոս Գ. Աղաջանյանի ֆունդամենտալ մենագրության մեջ։ Հաճելի է նշել, որ մեր հանրապետության մասնագետները սկզբունքային կարևոր ներդրում ունեն գյուղատնտեսական վնասատուների դեմ նոր արդյունավետ միջոցների մշակման գործում, հատկապես կենսաբանական պայքարի բնագավառում (Ա. Բաբայան, Գ. Մարջանյան, Գ. Աղաբաբյան և ուրիշներ)։ Անասնապահության զարգացման համար կարևոր նշանակություն ունեցան Վ. Հայրապետյանի կողմից մշակված պատվաստուկները թռչունների ժանտախտի և խոզերի «Աուես-

կի» հիվանդության դեմ, Վ. Ղազարյանի վակցինան՝ խոշոր եղջերավոր անասունների պաստերիոզ հիվանդության դեմ և է. Դավթյանի կողմից առաջարկված պրեպարատները ֆասցիլիտոզի դեմ պայքարելու գործում: Այդ աշխատանքները լայն կիրառում գտան նաև մեր հերկրի բազմաթիվ այլ շրջաններում:

Մեր կենսաբանները մեծ ավանդ ունեն գյուղատնտեսության հիմնական արտադրական միջոցի՝ հողի ուսումնասիրման և օգտագործման բարելավման գործում: Կազմված և տնտեսություններին են հանձնված ագրոքիմիական քարտեզները՝ հանքային պարարտանյութերի ռացիոնալ և էֆեկտիվ օգտագործման նպատակով: Հսկայական նշանակություն ունեն Արարատյան հարթավայրի աղակալած հողերի յուրացման համար մշակված մեթոդները և տեխնոլոգիան: Մոտակա 10—15 տարիների ընթացքում նախատեսվում է լրացուցիչ յուրացնել մոտ 30 հազար հեկտար, որի շնորհիվ կկրկնապատկվեն մեր հանրապետության ամենաարդյունավետ հողատարածությունները:

Հիդրոպոնիկայի զարգացումը Հայաստանում կապված է մեր ակադեմիայի ագրոքիմիական պրոբլեմների ու հիդրոպոնիկայի ինստիտուտի գործունեության և ակադեմիկոս Գ. Դավթյանի անվան հետ: Հաստատված է հիդրոպոնիկայի մեթոդով խորդենու, բանջարային ու տեխնիկական կուլտուրաների, դեղաբույսերի և այլ կուլտուրաների աճեցման բարձր տնտեսական էֆեկտիվությունը: Աշխատանքները ցույց են տալիս, որ աղուտներում և Արարատյան հարթավայրի անօգտագործելի հողերում բարձր էֆեկտիվությամբ կարելի է օգտագործել տարբեր գյուղատնտեսական կուլտուրաների աճեցումը բաց հիդրոպոնիկայի պայմաններում:

Հայ կենսաբանները խոշոր ավանդ ունեն բույսերի դասակարգման, ֆիզիոլոգիայի և բիոքիմիայի ակտուալ պրոբլեմների ուսումնասիրման գործում: Այդ աշխատանքները պատկանում են ակադեմիկոսներ Ա. Թախտաջյանին, Մ. Չալախյանին, Վ. Ղազարյանին և նրանց աշխատակիցներին: Ակադեմիայի բուսաբանները ստեղծեցին մի շարք ֆունդամենտալ ձեռնարկներ, ինչպիսիք են՝ «Հայաստանի ֆլորան», «Երևանի ֆլորան», «Հայաստանի ֆլորայի դեղաբույսերը», «Կովկասի փայտանյութը» և մի շարք այլ մենագրություններ: Հաջողությամբ մշակվեցին մեր հանրապետության անտառապատման և կանաչապատման գիտական հիմունքները: Հանրահայտ են Մ. Չալախյանի և իր աշակերտների ծառայությունները բույսերի հորմոնալ թերիայի և օնտոգենեզի ակտուալ պրոբլեմների մշակման գործում: Վ. Ղազարյանն իր աշխատակիցների հետ միասին ծավալուն աշխատանքներ ձեռնարկեց բարձրակարգ բույսերի ծերացման երևույթի պարզաբանման համար:

Հայաստանում բուռն զարգացում է ապրել մարդու և կենդանիների ֆիզիոլոգիան: Դա առաջին հերթին պայմանավորված է այն օժանդակությամբ, որ ցուցաբերել են ֆիզիոլոգիական գիտության հիմնական կենտրոններում աշխատող հայ ականավոր գիտնականները՝ Լ. Օրբելին, է. Հասրաթյանը, Խ. Կոշտոյանցը, Վ. Վարդանովը, Ա. Ալեքսանյանը, Ա. Քարամյանը և ուրիշներ: Մեր ակադեմիայի ֆիզիոլոգիայի ինստիտուտն երկրի առաջատար հաստատությունն է՝ վեգետատիվ ներվային համակարգի և ուղեղիկի ֆիզիոլոգիայի ուսումնասիրման բնագավառում: Այս ուղղությամբ նվաճումները ստացել են համընդհանուր ճանաչում: Ինստիտուտի կուլեկտիվը յուրացրել և հաջողությամբ ներդրել է ժամանակակից էլեկտրաֆիզիոլոգիական մեթոդները, այդ թվում միկրոէլեկտրոգային և հաշվողական տեխնիկան:

Բիոքիմիայի զարգացմանը սկիզբ դրվեց 1923 թ. Երևանի պետհամալսարանում բիոքիմիայի ամբիոնի կազմակերպմամբ: Ներկայումս մեզ մոտ ծա-

վալված է հետազոտութիւնների լայն ճակատ մարդու, կենդանիների, բույսերի և միկրոօրգանիզմների բիոքիմիայի բնագավառում:

Հատկապէս ճանաչման են արժանացել մեր գիտնականների աշխատանքները ներդրութիւնայի և գլխուղեղի բիոքիմիայի բնագավառում: Այս ուղղությամբ երկրի ամենախոշոր գիտական կենտրոնն է հանդիսանում Հայաստանի ԳԱ բիոքիմիայի ինստիտուտը, իսկ ակադեմիկոս Հ. Բունիաթյանի ստեղծած բիոքիմիկոսների դպրոցը համաշխարհային ճանաչման է արժանացել: Հայնորեն հայտնի են հետազոտութիւնները՝ նվիրված հիպոթալամուսի նեյրոհորմոնների անջատմանը և ուսումնասիրմանը, դամմամինաճարպաթթվի ստացմանը և բնութագրմանը, լիպիդների բիոքիմիային, քլորոպրենային աղբսիկոզին, հիպերտոնիայի զարգացման և ուղեղի արյան շրջանառութիւն խանգարումների ժամանակ գլիկոլիպիդների դերի պարզաբանմանը:

Օրիգինալ հետազոտութիւններ են տարւում բժշկական ինստիտուտում նուկլեինաթթուների բիոքիմիայի ուսումնասիրութիւն ուղղությամբ՝ կապված գլխուղեղի բարձրագույն ֆունկցիաների հետ: Համալսարանում հաջողությամբ զարգանում է համեմատական և էվոլյուցիոն բիոքիմիան, սրտաբանութիւն ինստիտուտում ուսումնասիրվում են սրտամկանի տարբեր պաթոլոգիական վիճակներում ֆերմենտների ակտիվութիւն փոփոխութիւնները:

Նոր և հեռանկարային ուղղութիւն է հողերի ֆերմենտների ուսումնասիրութիւնը և հողագոյացման պրոցեսների ու հողի բերրիութիւն ինդիկացիայի բիոքիմիական մեթոդների մշակումը:

Պետք է նշել տեխնիկական և կիրառական բիոքիմիայի նվաճումներն և ամենից առաջ էնթերմիայի՝ կոնյակի, շամպայնի ու այլ գինիների արտադրութիւն վերաբերյալ (Աղաբալյանց, Լ. Զամփուլադյան, Ն. Մնջոյան):

Բույսերի բիոքիմիայի զարգացումը Հայաստանում կապված է ակադեմիկոս Ն. Սիսակյանի անվան հետ, որի ղեկավարութիւնը մեզ մոտ հիմնադրվեցին հեռանկարային գիտական ուղղութիւններ:

Եթե սկզբնական շրջանում հիմնական ուղադրութիւնը բնակատնաբար ուղղված էր ինֆեկցիոն իմունոլոգիայի զարգացմանը, ապա վերջին տարիներին նկատելիորեն ընդլայնվել են հետազոտութիւններն ընդհանուր և ոչ ինֆեկցիոն իմունոլոգիայի բնագավառում: Հաճելի է ընդգծել այս աշխատանքների մոլեկուլյար-բջջային մակարդակը: Այդ ուղղութիւնը աշխատում են ակադեմիայի նուրբ օրգանական քիմիայի, փորձառական կենսաբանութիւն, Երևանի բժշկական ինստիտուտի, համատոլոգիայի և արյան փոխներարկման ինստիտուտի (հակառեզուսիմունոգլոբուլին պրեպարատը), սրտաբանութիւն ինստիտուտի (հումորալ և բջջային իմունիտետները սրտամկանի ինֆարկտի դեպքում), համամիութենական վիրաբուժական կենտրոնի հայկական մասնաճյուղի (տրանսպլատացիոն իմունիտետ), էպիդեմիոլոգիայի, վիրուսոլոգիայի և բժշկական պարագիտոլոգիայի (հակակարմրուկային կենդանի վակցինայի էֆեկտիվութիւնը) ինստիտուտի կոլեկտիվները:

Ընդհանուր հիգիենայի և պրոֆեսիոնալ հիվանդութիւնների ինստիտուտում ծավալուն աշխատանք է տարւում բազմաթիւ արդունաբերական ձեռնարկութիւններում ալերգիայի և ալերգոգերմատոզների հարցերի ուսումնասիրութիւն ուղղութիւնը:

Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտում մշակվել են խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների և խոզերի իմունիզացիայի մեթոդները, պարզաբանվել՝ կենդանիների իմունային ռեակցիաների վրա ան-

տիրիտիկների և սուլֆանիլամիդային պրեպարատների աղդեցության հիմնական օրինաչափությունները:

Հանրապետությունում մեծ հաջողությունների հասավ հելմինտոլոգիան: Բավական է նշել, որ եթե 1924 թ. բնակչության վարակվածությունը հելմինտներով կազմում էր 91,1 տոկոս, ապա 1978 թ. այն իջել էր մինչև 5,8 տոկոս:

Էպիդեմիոլոգիայի, վիրոսոլոգիայի և բժշկական պարազիտոլոգիայի, անասնապահության և անասնաբուժության, կենդանաբանության ինստիտուտներում մանրամասն ուսումնասիրված են բաղմամբով վտանգավոր հելմինտների էկոլոգիան, կենսաբանական առանձնահատկությունները և մշակված են նրանց դեմ պայքարի էֆեկտիվ միջոցները:

Մանրամասն ուսումնասիրված են վնասատու միջատների շատ խմբեր, մշակված և ներդրված են նրանց դեմ պայքարի արդյունավետ մեթոդներ: Այս հետազոտությունների արդյունքներն ամփոփված են «Հայաստանի գյուղատնտեսական կենդանիների, անասունների և պահեստների վնասատուները» կապիտալ աշխատության մեջ: Հրատարակված են մի շարք ֆունգամենտալ աշխատություններ Հայաստանի ֆաունայի տարբեր խմբերի բիոլոգիայի վերաբերյալ, ինչպես նաև որոշիչներ, որոնք ներկայումս դարձել են սեղանի ձեռնարկներ:

Բիոֆիզիկական հետազոտությունները սկիզբ առան մեզ մոտ 50-ական թվականներին, իսկ ներկայումս մենք ունենք խոշոր բիոֆիզիկական ստորաբաժանումներ ինչպես գիտությունների ակադեմիայում, այնպես էլ բուհերում ու գերատեսչական հաստատություններում:

Հիմնական նվաճումներն այդ բնագավառում ընդգրկում են մոլեկուլյար բիոֆիզիկայի, մեմբրանոլոգիայի և ռադիացիոն բիոֆիզիկայի կարևոր հարցերը: Որոշակի հաջողություններ կան բժշկական բիոֆիզիկայի ասպարեզում, հատկապես մկանների կրճատումների մեխանիզմի պարզաբանման ուղղությամբ: Ներկայումս Երևանի ֆիզիկայի ինստիտուտում, համալսարանում, փորձառական կենսաբանության ինստիտուտում և մի շարք այլ հիմնարկություններում կան բարձր որակյալ կադրեր և անհրաժեշտ նյութատեխնիկական բազա բիոֆիզիկայի կարևոր ուղղությունների զարգացման համար: Հաճելի է նշել, որ վերջին տարիների ընթացքում աշխատանքներ են կազմակերպվում կիրառական բիոֆիզիկայի բնագավառում:

Մոլեկուլյար բիոլոգիան կազմակերպական ամրապնդում ստացավ 1965 թ. ԳԱ փորձառական կենսաբանության ինստիտուտի ստեղծումից հետո: Այդ տեսակետից ամենից առաջ պետք է նշել նուկլեինաթթուներին նվիրված հետազոտությունները: Մեկուսացված և բնութագրված են որոշ բակտերիաների պլազմիդներ, ցույց է տրված նրանց դերը տոքսինների և այլ ֆիզիոլոգիապես ակտիվ միացությունների բիոսինթեզի պրոցեսներում: Առաջարկված է կոնցեպցիա բջիջների դիֆերենցիայի պրոցեսում ԴՆԹ-ի հիպերոնպլիկացիայի դերի վերաբերյալ:

Երևանի ֆիզիկայի ինստիտուտում մշակված է բջջի կորիզի սպեցիֆիկ ստրուկտուրաների ավտոմատ անալիզի սիստեմ՝ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների կիրառմամբ:

Մոլեկուլյար կենսաբանության և գենետիկական ինժեներիայի նվաճումներն արհեստական օրգանիզմների ստեղծման ասպարեզում իրավացիորեն հիմք են տալիս համարելու, որ կենսաբանության մեջ սկսվել է նոր դարագլուխ՝ բիոտեխնոլոգիական հեղափոխության ժամանակաշրջան: Քաջ հայտ-

նի է, որ այս նվաճումները ձեռք են բերվել հիմնականում միաբջիջ օրգանիզմների կամ մանրէների ուսումնասիրման հետևանքով: Վերջիններս առաջ-
ժրմ մնում են այդ հետազոտությունների գլխավոր օբյեկտները: Այս կապակ-
ցությամբ բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում մանրէաբանության և
այլ հարակից գիտությունների արդի վիճակը:

Բժշկական մանրէաբանության և համաճարակաբանության զարգացումը
Հայաստանում թելադրված էր հանրապետության սանիտարական վիճակի բարե-
լավման և վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի անհրաժեշտությամբ:

Արդեն 1923 թ. մեզ մոտ կազմակերպվեց տրոպիկական ինստիտուտը, որի
աշխատակիցների մեծաթիվ կոլեկտիվի ջանքերով (Ա. Ալեքսանյան, Լ. Հարու-
թյունյան, Ք. Փիրումով, Մ. Քեղիշյան, Շ. Մաթևոսյան, Գ. Պապովյան, Ն. Հա-
կոբյան, Ա. Իսահակյան) հսկայական աշխատանք կատարվեց մալարիայի և
այլ էնդեմիկ համաճարակների վերացման համար:

Մանրէաբանության տարբեր բնադավառների օջախներ կազմակերպվե-
ցին բուհ-երում և առանձին ձեռնարկություններում:

1932 թ. կազմակերպվեց մանրէաբանության ամբիոն նրևանի անասնա-
բուժական-անասնաբուժական ինստիտուտում՝ պրոֆեսոր Գ. Շաքարյանի ղե-
կավարությամբ: Այդ ամբիոնը կարևոր օջախ հանդիսացավ ոչ միայն անաս-
նաբուժական, այլ նաև ընդհանուր տեխնիկական մանրէաբանության գծով
որակյալ կադրերի պատրաստման համար: ՍՍՀՄ գիտությունների ակադեմիա-
յի հայկական մասնաճյուղի միկրոբիոլոգիայի սեկտորը կազմակերպվեց
1939 թ.՝ աշխատակիցների փոքրաթիվ կոլեկտիվով (Հ. Փանոսյան, Փ. Սարու-
խանյան, Լ. Նրզնիկյան, Ռ. Միրզաբեկյան, Ս. Ավագյան): Հայաստանում ընդ-
հանուր և կիրառական մանրէաբանության զարգացման համար մեծ նշանա-
կություն ունեցավ Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի և Մինիստրների խորհրդի
1964 թ. հունիսյան որոշումը, որի համաձայն խոշոր միջոցառումներ իրա-
կանացվեցին մեր հանրապետության մանրէաբանական արդյունաբերության
զարգացման և գիտահետազոտական աշխատանքների ընդլայնման համար:
Արեւմտյան քաղաքի մոտակայքում կառուցվեցին միկրոբիոլոգիայի ինստիտու-
տի խոշոր համալիրը և Արեւմտյանի բիոքիմիական պատրաստուկների գործա-
րանք, իսկ Ջարենցավանում՝ լիզինի արտադրության դործարանը:

Ծավալուն գիտաարտադրական աշխատանքներ են տարվում միկրոօրգա-
նիզմների գենետիկայի համամիութենական ինստիտուտի հայկական մաս-
նաճյուղում և քիմիական արդյունաբերության մինիստրության քիմիական
ռեակտիվների համամիութենական ինստիտուտի հայկական բաժանմունքում:

Այսպիսով, մեր հանրապետությունում առկա է ընդհանուր և կիրառական
մանրէաբանության և բիոքիմիայի գիտաարտադրական հետազոտությունների
լայն ճակատ, և մենք ունենք բոլոր հնարավորություններն այդ ուղղությամբ
բեղմնավոր աշխատանքներ ծավալելու համար:

Ինչպես տեսանք համառոտ և ոչ լրիվ թվարկումից՝ մեր հանրապետու-
թյունում կենսաբանական գիտությունն անցած 60 տարիների ընթացքում բուռն
զարգացում է ապրել և անկասկած մեծ հաջողությունների հասել: Մեր կենսա-
բաններն իրավացիորեն կարող են հպարտանալ իրենց նվաճումներով և նշա-
նակալի այն ափանդով, որ նրանք ներդրել են գիտության ու ժողովրդական
տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման գործում:

Կենսաբանության ժամանակակից էտապը բնութագրվում է ճշգրիտ գի-
տությունների հետ նրա արագ ինտեգրացմամբ՝ ֆիզիկայի, քիմիայի, հաշվո-

ղական տեխնիկայի լայն ներթափանցմամբ կենսաբանության տարբեր բնագավառները:

Ժամանակակից կենսաբանությունը հզոր արդյունաբերություն է՝ հագեցված բարդ տեխնոլոգիական սարքավորումներով, որոնք կենսաբաններից պահանջում են բարձր տեխնիկական պատրաստականություն: Մոլեկուլյար կենսաբանության, գենետիկական ինժեներիայի և ինժեներային էնզիմոլոգիայի նվաճումները, իմոբիլիզացված բջիջների և ֆերմենտների ստացումը, նրանց լայն ներդրումն իսկական հեղափոխություն առաջացրին և նոր դարագլուխ բաց արին բիոտեխնոլոգիայի մեջ: Այս ուղղությամբ հաջողություններ հնարավոր են միմյանց միջոցների և ռեսուրսների մաքսիմալ կոնցենտրացման և արդյունավետ օգտագործման դեպքում:

Հանրայնացման զարգացման պայմանների յուրահատկությունը պահանջում է կենսաբանական արդյունաբերության մաքսիմալ զարգացում, գյուղատնտեսության առաջել ինտենսիվացում, արտաքին միջավայրի պահպանման հարցերի հաջող և արագ լուծում անթափոն արտադրություն կազմակերպելու ուղիով: Այս ամենը պահանջում է կենսաբանական գիտության կիրառական ուղղությունների բուռն զարգացում:

Ավելի քան կեսդարյա գիտահետադուսական աշխատանքների շնորհիվ մեր հանրապետությունում կազմակերպվել և հաջողությամբ զարգացել են ուրույն գիտական դպրոցներ և ուղղություններ կենսաբանության տարբեր ճյուղերում: Մեր բնագետների անմիջական պարտքն է հանդիսանում պահպանել և զարգացնել այդ դպրոցները և ուղղությունները:

Կենսաբան գիտնականները հանրապետության աշխատավորության հետ մեկտեղ իրենց ուժերը չեն խնայի իրականացնելու ժողովրդական տնտեսության զարգացման այն հսկայական խնդիրները, որոնք նախանշված են Սովետական Միության կոմունիստական կուսակցության 26-րդ համագումարի պատմական որոշումներում:

Է. Գ. ԱՅՐԻԿՅԱՆ

ДОСТИЖЕНИЯ БИОЛОГИЧЕСКОЙ НАУКИ В АРМЕНИИ

Э. К. АФРИКЯН

Обобщены основные достижения биологических наук в Армении за годы советской власти. Большое внимание уделено успехам прикладных отраслей и некоторым перспективам их развития.